



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ԳԳ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ
հեռ. (+374) 25324114, 91199324
էլ. փոստ info_alaverdi@earthus.am
anushevovan@rambler.ru

Lori, Alaverdi,
Zoravar Andranik str.8/1, 403
Tel. (+374) 25324114, 91199324,
E-mail info_alaverdi@earthus.am
anushevovan@rambler.ru

Տարածքային կառավարման և
արտակարգ իրավիճակների
Նախարար պարոն
Ա. Երիցյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն նախարար.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,

Խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ աշխատանքային գործունեությանն առնչվող հետևյալ փաստաթղթերի պատճենները

1. Ի՞նչ տարածք են զբաղեցնում Ախթալայի պոչամբարները
2. Ու՞մ կողմից եւ ե՞րբ է եղել առաջարկ Ախթալայի «Նահատակ» կոչվող պոչամբարի շարունակությամբ նոր պոչամբարի կառուցման վերաբերյալ
3. Հատկացվե՞լ է արդյոք նոր տարածք «Նահատակ» կոչվող նոր պոչամբարի կառուցման նպատակով
4. Ձեզ ներկայացված են արդյո՞ք «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ աշխատանքային գործունեության օրինակակետությունը ներկայացնող փաստաթղթերը.եթե այո, ապա տրամադրել պատճենները
5. Իրականացվե՞լ են նախարարության կողմից ուսումնասիրություններ Ախթալայի պոչամբարների վտանգավորությունն ու ռիսկերը գնահատելու վերաբերյալ

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով՝

Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող
30.03.2015թ.

Անուշ Էփոյան